

«ՖԻՆԱ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործունեության նկարագրություն	9
2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները	9
3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը	9
4. Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ	15
5. Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ	16
6. Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ	17
7. Հիմնական միջոցներ	18
8. Պաշարներ	19
9. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	19
10. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	19
11. Փոխառություն	19
12. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	20
13. Հասույթ	20
14. Վաճառքի հնքնարժեք	20
15. Վարչական ծախսեր	20
16. Պարտավորվածություններ, պայմանական պարտավորություններ	21
17. Գործարքներ կապակցված կողմերի հետ	21
18. Ռիսկի կառավարում	22

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ***(հազար ՀՀ դրամ)*

	Ծան.	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	7	1,379	1,207
Ոչ կյուրական ակտիվներ		801	1,072
Հետաձգված հարկային ակտիվներ		534	206
		2,714	2,485
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	8	9,715	339
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	10,419	7,504
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10	3,677	628
		23,811	8,471
Ընդամենը ակտիվներ		26,525	10,956
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ		100	100
Կուտակված շահույթ/(վնաս)		(2,775)	(130)
		(2,675)	(30)
Ընթացիկ պարտավորություններ			
Փոխառություն	11	10,630	7,330
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	18,570	3,656
		29,200	10,986
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		26,525	10,956

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Ընկերության ղեկավարության կողմից և ստորագրվել՝

Տնօրեն՝

30 ապրիլ, 2023թ



Արմինե Ավագյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն**2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար***(հազար ՀՀ դրամ)*

	Ծան.	2022թ.	2021թ.
Հասույթ	13	11,898	9,562
Վաճառքի հնքարժեք	14	(9,281)	(6,319)
Համախառն եկամուտ		2,617	3,243
Վարչական ծախսեր	15	(5,594)	(3,892)
Այլ եկամուտ		299	-
Այլ ծախսեր		(297)	-
Շահույթ/(վնաս) մինչև հարկումը		(2,975)	(649)
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում		330	117
Տարվա զուտ շահույթ/(վնաս)		(2,645)	(532)
Այլ համապարփակ ֆինանսական եկամուտ		-	-
Տարվա ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունք		(2,645)	(532)

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
(հազար ՀՀ դրամ)

	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ/(վնաս)	Ընդամենը Սեփական կապիտալ
Մնացորդ առ 1 հունվարի 2021թ.	100	402	502
Հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	(532)	(532)
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2021թ.	100	(130)	(30)
Հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	(2,645)	(2,645)
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2022թ.	100	(2,775)	(2,675)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար
(հազար ՀՀ դրամ)

	Ծան.	2022թ.	2021թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից			
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ		11,755	9,268
Մատակարարներին վճարումներ ապրանքների և ծառայությունների համար		(7,560)	(3,487)
Աշխատակիցներին վճարումներ		(6,105)	(4,068)
Վճարված հարկեր և պարտադիր վճարներ		(2,487)	(3,214)
Վարձակալություն		(328)	(229)
Այլ մուտքեր		6,710	240
Այլ ելքեր		(35)	(6)
Չուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		1,950	(1,496)
Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների ձեռք բերում		(2,201)	(666)
Չուտ դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից		(2,201)	(666)
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից			
Ստացված փոխառություններ		8,900	2,715
Ստացված փոխառությունների մարում		(5,600)	(250)
Չուտ դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		3,300	2,465
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ		3,049	303
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա սկզբում		628	325
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ հաշվետու տարվա վերջում		3,677	628

1. Գործունեության նկարագրություն

«ՖԻՆՍ ԱՌԻԴԻՏ» ՓԲ Ընկերությունը (նախկին անվանումը «ՖԻՆՍ» ՓԲԸ ,այսուհետ՝ Ընկերություն) շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն է: Ընկերությունը հիմնադրվել է 2011թ. հունիսի 27-ին և գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Ընկերության կանոնադրական կապիտալը բաղկացած է 100 հատ 1,000 ՀՀ դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսերից: Ընկերության կանոնադրական կապիտալի 100% պատկանում է՝ Արմինե Ավագյանին:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն է, իսկ ընկերության ընթացիկ գործունեությունը իրականացնում է Ընկերության տնօրենը ,որը գործում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված իր իրավասությունների շրջանակներում:

Ընկերությունը 2022թ. մայիսի 27-ին գրանցվել է Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի ռեեստրում և հիմնական գրանցման գրառման համարն է՝ 1 22 0700:

Ընկերությունը հիմնականում մատուցում է հետևյալ ծառայությունները՝

- Աուդիտ և աուդիտին հարակից այլ ծառայություններ
- Հաշվապահական հաշվառում
- Հաշվապահական և Հարկային խորհրդատվություն

2022թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ունեցել է 7 աշխատող (2021՝ 4 աշխատող):

2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

Ընդհանուր

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ):

Ընկերությունը պարտավորված է իրականացնել հաշվապահական հաշվառումը և պատրաստել ֆինանսական հաշվետվությունները ՀՀ դրամով՝ հաշվապահական հաշվառման ՀՀ օրենսդրությանը և դրանից բխող ցուցումներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա, ինչպես բացահայտված է ստորև բերված հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են իրական արժեքով:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (ՀՀ դրամ), և բոլոր արժեքները կլորացված են մինչև հազար ՀՀ դրամ, եթե այլ բան նշված չէ:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներն ու դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները և բանկային հաշիվների մնացորդները:

Ավանդադրված միջոցները դասակարգվում են որպես կարճաժամկետ, եթե նրանց մարման ժամկետը հաշվետու ժամանակաշրջանից հետո մինչև 90 օր է:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցներն արտացոլվում են սկզբնական արժեքով՝ առանց ընթացիկ սպասարկման ծախսերի՝ հանած կուտակված մաշվածություն ու արժեզրկումից կուտակված կորուստները: Արժեքը ներառում է սարքավորման փոխարինման ժամանակ կատարված ծախսերը, եթե դրանք բավարարում են ճանաչման չափանիշներին:

Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերանայվում է արժեզրկման տեսանկյունից այն դեպքում, երբ առաջանում են դեպքերի կամ հանգամանքների այնպիսի փոփոխություններ, որոնք վկայում են ակտիվի հաշվեկշռային արժեքի հնարավոր չվերականգնման վերաբերյալ:

Ակտիվի մաշվածության հաշվարկը սկսվում է կատարվել այն ժամանակ, երբ այն օգտագործման համար դառնում է հասանելի: Մաշվածությունը հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով՝ ակտիվի ներքոնշյալ օգտակար ծառայության գնահատված ժամկետների ընթացքում:

Համակարգչային տեխնիկա և սարքավորումներ - 1-5 Տարի
Տնտեսական և այլ հիմնական միջոցներ- 1-5 Տարի

Ֆինանսական ակտիվներ

Ընկերության ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման պահին դասակարգվում են որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ:

Ընկերությունը ունի այնպիսի ֆինանսական ակտիվներ, ինչպիսիք են դրամական միջոցներն ու դրանց համարժեքները և ավանդադրված միջոցներ, որոնք հանդիսանում են իր գործունեության անմիջական արդյունքը:

Ֆինանսական ակտիվը (կամ, որտեղ կիրառելի է, ֆինանսական ակտիվի մի մասը, կամ համանման ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտված է, Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանել է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց էական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման պայմանավորվածության համաձայն, ինչպես նաև, Ընկերությունը կամ (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և հատույցների զգալի մասը, կամ (բ) ոչ փոխանցել և ոչ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և հատույցների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Այն դեպքում, երբ Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և ոչ փոխանցել ու ոչ էլ պահպանել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և հատույցների զգալի մասը, և չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ակտիվը ճանաչվում է Ընկերության շարունակվող մասնակցությանը համարժեք: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, այդպիսի մասնակցությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և Ընկերությունից պահանջվող փոխհատուցման առավելագույն գումար:

Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ պարտքային գործիքները սկզբնական ճանաչումից հետո չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով: Դասակարգումը հիմնված է հետևյալ երկու չափանիշների վրա. Ընկերությանի ակտիվների կառավարման բիզնես մոդելի և արդյոք գործիքի գծով պայմանագրային դրամական միջոցների հոսքերը բավարարում են «բացառապես հիմնական գումարի և տոկոսների վճարման» չափանիշին: ՖՀՄՍ 9-ը պահանջում է Ընկերությունից ճանաչել ակնկալվող պարտքային կորստի գծով պահուստ բոլոր այն պարտքային գործիքների համար, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով: Ընկերությունը բանկերում բացված հաշիվների պահուստի գումարը հաշվարկում է՝ ելնելով գործընկեր բանկի երկարաժամկետ վարկային ռեյտինգից:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած գործարքին ուղղակիորեն վերագրելի ծախսերը, և չեն դասակարգվում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Հետագա չափումը կատարվում է ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:
Ընկերությանի հիմնական ֆինանսական պարտավորությունները բաղկացած են կրեդիտորական պարտքերից և փոխառություններից:

Ֆինանսական պարտավորությունն ապաճանաչվում է, երբ մարվում, չեղյալ է համարվում կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է:

Սեփական Կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

Աշխատակիցների հատուցումներ

Աշխատավարձերը, ՀՀ Պետական բյուջե հատկացումները, վճարովի տարեկան արձակուրդը, հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդը, պարգևավճարները և այլ ոչ դրամական հատուցումները (ինչպիսիք են, օրինակ, առողջապահական ծառայությունները) հաշվեգրվում են Ընկերության աշխատակիցների կողմից համապատասխան ծառայությունների մատուցման տարում: ՀՀ Պետական կենսաթոշակային հիմնադրամին հատկացումները կատարվում են Ընկերության կողմից տվյալ տարվա ընթացքում ուժի մեջ գտնվող պարտադիր դրույքաչափերին համապատասխան: Այսպիսի հատկացումները ծախսագրվում են, երբ կատարվում են:

Վարձակալություն

Ընկերությունը՝ որպես վարձատու

Վարձակալությունը, որի դեպքում Ընկերությունը չի փոխանցում սեփականության հետ կապված էական բոլոր ռիսկերն ու հատույցները, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Վարձակալության ժամկետի ընթացքում ձևավորված վարձակալական եկամուտները հաշվառվում են գծային մեթոդով և իրենց գործառնական բնույթի պատճառով շահույթի կամ վնասի մասին հաշվետվության մեջ ներառվում են հասույթում:
Բանակցությունների և գործառնական վարձակալության կազմակերպման ժամանակ կատարված սկզբնական ուղղակի ծախսերը ավելացվում են վարձակալության տրված ակտիվի հաշվեկշռային արժեքին և վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են նույն կերպ, ինչ վարձակալական վճարները: Պայմանական վարձակալական վճարները ճանաչվում են որպես հասույթ այն ժամանակաշրջանում, երբ Ընկերությունը դրանք վաստակել է:

Ընկերությունը՝ որպես վարձակալ

Պայմանագրի սկզբի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալության է (կամ պարունակում է վարձակալություն): Սա տեղի ունի, եթե պայմանագիրը վճարումների դիմաց որոշ ժամանակահատվածով փոխանցում է նույնականացված ակտիվի օգտագործման վերահսկողության իրավունքը: Ընկերությունը բոլոր վարձակալությունների համար կիրառում է ճանաչման և չափման միասնական մոտեցում, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների: Ընկերությունը ճանաչում է վարձակալության գծով պարտավորություններ վճարումներ կատարելու համար, և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ, որոնք ներկայացնում են հիմքում ընկած ակտիվը օգտագործելու իրավունքը:

3.3 հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Վարձակալություն (շարունակություն)

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Ընկերությունը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ (այն ամսաթիվը, երբ հիմքում ընկած ակտիվը հասանելի կդառնա վարձակալի կողմից օգտագործման համար): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները, և ճշգրտված վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է ճանաչված վարձակալության գծով պարտավորությունների գումարը, սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկում է գծային հիմունքով գնահատված օգտակար ծառայության ժամկետից և վարձակալության ժամկետից նվազագույնով: Եթե վարձակալական ժամկետի վերջում վարձակալված ակտիվի սեփականության իրավունքը փոխանցվում է Ընկերությանը կամ դրա արժեքն արտացոլում է գնման օպցիոնի իրագործումը, մաշվածությունը հաշվարկում է օգտագործելով ակտիվի գնահատված օգտակար ծառայության ժամկետը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները նույնպես ենթակա են արժեզրկման գնահատման:

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ Ընկերությունը ճանաչում է վարձակալության գծով պարտավորությունը վարձակալության ժամկետի ընթացքում վճարման ենթակա վարձավճարների ներկա արժեքով: Վարձավճարները ներառում են հաստատուն վճարումները (ներառյալ ըստ Էուլթյան հաստատուն վճարումները)՝ հանած վարձակալության ցանկացած ստացվելիք խրախուսումները, վարձակալության փոփոխուն վճարումները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից և գումարները, որոնք սպասվում է, որ կվճարվեն վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձավճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գինը, երբ Ընկերությունը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպցիոնը, և վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումներ, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է Ընկերության՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագործումը: Փոփոխուն վարձավճարներ, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից, ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում այդ վճարումներին հանգեցնող դեպքը կամ իրավիճակը (բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք կատարվել են պաշարների ստացման նպատակով):

Վարձավճարների ներկա արժեքը հաշվարկելիս Ընկերությունը օգտագործում է վարձակալության մեկնարկի ամսաթվին լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը, քանի որ վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը հնարավոր չէ հետադարձաբար որոշել: Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալության գծով պարտավորության գումարը ավելացվում է՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար, և նվազեցվում է՝ կատարված վարձավճարները արտացոլելու համար: Ավելին, վարձակալության գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը վերաչափվում է, եթե տեղի են ունենում վերափոխումներ, վարձակալության ժամկետի փոփոխություն, վարձավճարների փոփոխություն (օր.)՝ ապագա վճարումների փոփոխություն պայմանավորված այդ վարձավճարները որոշելու համար օգտագործված ինդեքսի կամ դրույքի փոփոխությամբ) կամ հիմքում ընկած ակտիվի գնման օպցիոնի գնահատումներում փոփոխություն:

Կարճաժամկետ վարձակալություններ և փոքրարժեք ակտիվների վարձակալություններ

Ընկերությունը կարճաժամկետ վարձակալությունների նկատմամբ (այսինքն՝ այն վարձակալությունները, որոնք վարձակալության ժամկետը մեկնարկի ամսաթվից 12 ամիս և պակաս է, և որոնք չեն պարունակում գնման օպցիոն) կիրառում է կարճաժամկետ վարձակալությունների ճանաչման բացառությունը: Ընկերությունը նաև կիրառում է փոքրարժեք ակտիվների վարձակալությունների ճանաչման բացառությունը այն գրասենյակային գույքի վարձակալությունների նկատմամբ, որոնք արժեքը, ենթադրվում է, որ փոքր է: Կարճաժամկետ վարձակալություններին և փոքրարժեք ակտիվներին վարձակալություններին վերաբերող վարձավճարները գծային հիմունքով ծախս են ճանաչվում վարձակալության ժամկետի ընթացքում :

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկի գծով փոխհատուցումը տարվա համար հարկվող վնասից փոխհատուցվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ Էուլայան գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուղվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, որոնք կապված են դուստր ընկերություններում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների ու համատեղ ձեռնարկումներում մասնակցությունների հետ, բացառությամբ այն դեպքերի, որտեղ Ընկերությունը ի վիճակի է վերահսկելու ժամանակավոր տարբերության հակադարձումը և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի հակադարձվի տեսանելի ապագայում: Նմանատիպ ներդրումների և մասնակցությունների հետ կապված նվազեցվող ժամանակավոր տարբերություններից առաջացող հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է հարկվող շահույթի առկա լինելը, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը, և որը կմարվի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ Էուլայան ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք կախված են այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը զանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Ընկերությունը մտադիր է գուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

3. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը (շարունակություն)

Պաշարներ

Պաշարները հավաքվում են ինքնարժեքի և հնարավոր իրացման գույք արժեքի նվազագույնով: Պաշարների արժեքը հաշվառվում է՝ օգտագործելով առաջին մուտք-առաջին ելք (ՎՄՎԵ) և ներառում ներառում է ձեռքբերման ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Անավարտ աշխատանքը ներառում է մատուցվող ծառայությունների շրջանակում ուղղակիորեն կրած ծախսումները որոնք ներառում են նաև պարբերաբար բաշխվող հաստատուն և փոփոխուն վերադիր ծախսումներ:

Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի գեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

Հասույթ

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Հասույթը նվազեցվում է պատվիրատուներից վերադարձումների, գեղչերի և այլ նմանատիպ պահուստների գծով գնահատված գումարների չափով:

Ծառայությունների մատուցման պայմանագրից հասույթը ճանաչվում է՝ պայմանագրի ավարտվածության աստիճանի հիման վրա: Պայմանագրի աշխատանքների ավարտվածության աստիճանը որոշվում է պայմանագրի աշխատանքների ուսումնասիրությամբ, որի ժամանակ կողմերի միջև կնքվում է ծառայությունների հանձնման-ընդունման ակտ: Եթե պայմանագրի արդյունքը չի կարող արժանահավատորեն գնահատվել, ապա Ընկերությունը ճանաչում է հասույթը միայն պայմանագրի փաստացի կրած այն ծախսումների չափով, որոնք հավանական է, որ կփոխհատուցվեն և ծախսումները որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում կատարվել են:

Պայմանագրի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվեն հետևյալ բոլոր պայմանները՝

- հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն,
- հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը
- հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները

4. Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ

Ընկերությունը առաջին անգամ կիրառել է որոշակի ստանդարտներ և ստանդարտների փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում 2022թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որը հրապարակվել է, բայց դեռևս ուժի մեջ չի մտել:

Անբարենպաստ պայմանագրեր - Պայմանագրի կատարման ծախսեր – ՀՀՄՍ 37 փոփոխություններ

Պայմանագիրը համարվում է անբարենպաստ, եթե այդ պայմանագրով նախատեսված պարտականությունները կատարելու անխուսափելի ծախսերը (այսինքն, այն ծախսերը, որոնց մասով Ընկերությունը չի կարող խուսափել պայմանագրի առկայության դեպքում) գերազանցում են դրա շրջանակներում ակնկալվող տնտեսական օգուտները: Փոփոխությունները հստակեցնում են, որ պայմանագրի անբարենպաստ կամ վնասաբեր լինելը գնահատելիս, կազմակերպությունը պետք է ներառի այն ծախսումները, որոնք ուղղակիորեն առնչվում են ապրանքների կամ ծառայությունների մատուցման պայմանագրին, ներառյալ ինչպես լրացուցիչ ծախսերը (օրինակ՝ ուղղակի աշխատանքի և կյուլթերի ծախսերը), այնպես էլ պայմանագրային գործունեության հետ անմիջականորեն կապված ծախսերի բաշխումը (օրինակ՝ պայմանագրի կատարման համար օգտագործվող սարքավորումների մաշվածությունը և պայմանագրի կառավարման և վերահսկողության ծախսերը): Ընդհանուր և վարչական ծախսերը ուղղակիորեն չեն առնչվում պայմանագրին և չեն ներառվում այդ ծախսերում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ծախսերը հստակորեն գանձվում են պայմանագրի մյուս կողմից:

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չունեն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հիմնական միջոցներ – մուտքեր նախքան նախանշած նպատակով օգտագործելը – ՀՀՄՍ 16-ի փոփոխություններ

Այս փոփոխությունը չի թույլատրում կազմակերպություններին հիմնական միջոցների արժեքից նվազեցնել ակտիվը համապատասխան վայր և վիճակի բերելու ընթացքում, որն անհրաժեշտ է դեկավարության կողմից նախանշված նպատակով այն գործարկելու համար, արտադրված միավորների վաճառքից ստացված մուտքերը: Փոխարենը, կազմակերպությունը ճանաչում է տվյալ միավորների վաճառքից մուտքերը և տվյալ միավորների արտադրման նպատակով ծախսումները շահույթում կամ վնասում: Անցումային դրույթների համաձայն՝ Ընկերությունը կիրառում է այս փոփոխությունները հետընթաց միայն հիմնական միջոցների այն միավորների նկատմամբ, որոնք մատչելի են օգտագործման համար ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո, երբ կազմակերպությունը առաջին անգամ կիրառում է փոփոխությունը (սկզբնական կիրառման ամսաթիվ):

Այս փոփոխությունները Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցություն չեն ունեցել, քանի որ չի իրականացվել հիմնական միջոցներով արտադրված այդպիսի միավորների վաճառք, որոնք մատչելի են եղել ներկայացված ամենավաղ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո:

ՀՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ - Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման համար , «10 տոկոս» թեսթում ներառվող վճարներ

Փոփոխությունը պարզաբանում է այն վճարները, որոնք կազմակերպությունը ներառում է գնահատելիս, թե արդյոք նոր կամ փոփոխված ֆինանսական պարտավորության պայմանները ըստ Եուրոյան տարբեր են սկզբնական ֆինանսական պարտավորության պայմաններից: Այս վճարները ներառում են միայն փոխառուի և փոխատուի միջև վճարված կամ ստացված վճարները, այդ թվում՝ կամ փոխառուի կամ փոխատուի կողմից մյուսի անունից վճարված կամ ստացված վճարները: Համանման փոփոխություն չի առաջարկվում ՀՀՄՍ 39 Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում ստանդարտի համար:

4.Նոր և փոփոխված ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

Անցումային դրույթների համաձայն՝ Ընկերությունը փոփոխությունը կիրառում է այն ֆինանսական պարտավորությունների նկատմամբ, որոնք փոփոխված կամ փոխանակված են՝ կազմակերպության կողմից փոփոխության առաջին անգամ կիրառման պահին սկսվող կամ դրան հաջորդող տարեկան ժամանակաշրջանների համար (նախնական կիրառման ամսաթիվը): Այս փոփոխությունները Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցություն չեն ունեցել, քանի որ տվյալ ժամանակաշրջանում Ընկերության ֆինանսական գործիքներում փոփոխություններ չեն կատարվել:

5.Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ

Ստորև նկարագրված են հրապարակված նոր և փոփոխված ստանդարտներն ու մեկնաբանությունները, որոնք Ընկերության ֆինանսական հաշվետվությունների թողարկման ժամանակ դեռևս ուժի մեջ չեն եղել: Ընկերությունը պատրաստվում է կիրառելիության դեպքում ընդունել այս նոր և փոփոխված ստանդարտները և մեկնաբանությունները, երբ դրանք ուժի մեջ մտնեն:

ՀՀՄՍ 1 փոփոխություն. Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ և ոչ ընթացիկ

2020 թվականի հունվարին ՀՀՄՍ Խորհուրդը փոփոխություններ է հրապարակել ՀՀՄՍ 1-ի 69-ից 76-րդ պարագրաֆներում՝ հստակեցնելու պարտավորությունները որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգելու պահանջները: Փոփոխությունները պարզաբանում են.

- ▶ Ինչ է նշանակում մարումը հետաձգելու իրավունք,
- ▶ Որ հետաձգելու իրավունքը պետք է գոյություն ունենա հաշվետու ժամանակաշրջանի վերջում,
- ▶ Որ դասակարգման վրա չի ազդում կազմակերպության՝ հետաձգելու իրավունքը օգտագործելու հավանականությունը,
- ▶ Որ միայն այն դեպքում, երբ փոխարկելի պարտավորության մեջ ներդրված ածանցյալ գործիքն ինքնին հանդիսանում է բաժնային գործիք, ապա պարտավորության պայմանները չեն ազդի դրա դասակարգման վրա:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023 թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և պետք է կիրառվեն հետընթաց: Ընկերությունը ներկայումս գնահատում է ընթացիկ գործունեության վրա փոփոխությունների հնարավոր ազդեցությունը:

Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում – Փոփոխություններ ՀՀՄՍ 8 ստանդարտում

2021 թվականի փետրվարին ՀՀՄՍ-ն փոփոխություններ է հրապարակել ՀՀՄՍ 8-ում, որտեղ ներկայացված է «հաշվապահական հաշվառման գնահատումների» սահմանումը: Փոփոխությունները պարզաբանում են հաշվապահական հաշվառման գնահատումների և հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների և սխալների ուղղման տարբերությունը: Ինչպես նաև, դրանք պարզաբանում են, թե ինչպես են կազմակերպությունները օգտագործում չափման հիմունքները և ելակետային տվյալները՝ հաշվապահական հաշվառման գնահատումներ մշակելու համար:

Փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար և կիրառվում են հաշվապահական հաշվառման քաղաքականության և հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխությունների նկատմամբ, որոնք տեղի են ունենում այդ ժամանակաշրջանի սկզբին կամ դրանից հետո: Վաղաժամկետ կիրառումը թույլատրելի է, եթե այդ փաստը բացահայտվում է: Ակնկալվում է, որ փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

5.Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ (շարունակություն)

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՀՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում

2021թ.-ի փետրվարին ՀՀՄՍ-ն հրապարակել է փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՀՀՄՍ Գործնական ցուցումներ 2-ում («Էականության մասին դատողությունների կիրառում»), որտեղ ներկայացված են ուղեցույցներ և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառել հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վերաբերյալ Էականության դատողությունները: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին ներկայացնել հաշվապահական հաշվառման քաղաքականության առավել օգտակար բացահայտումները՝ փոխարինելով «Նշանակալի» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջը «Էական» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջով և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե կազմակերպություններն ինչպես պետք է կիրառեն Էականության հայեցակարգը հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

ՀՀՄՍ 1-ի փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2023թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար՝ թույլատրելով վաղաժամկետ կիրառումը: Զանի որ Գործնական Զուցումներ 2-ի փոփոխությունները ներկայացնում են հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղեկատվության Էականության սահմանման կիրառման ոչ պարտադիր ուղեցույց, այս փոփոխությունների համար ուժի մեջ մտնելու ամսաթվի սահմանման անհրաժեշտություն չկա:

Ընկերությունը ներկայումս գնահատում է փոփոխությունների ազդեցությունը Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտումների վրա

6.Նշանակալի հաշվապահական դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

Գնահատումներ, ենթադրություններ և դատողություններ

ՀՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են ունենում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները՝ հիմնված պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք խելամիտ են համարվում տվյալ պայմաններում, հիվք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից: Սույն ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները կապված են հասույթի՝ ժամանակի ընթացքում կամ ժամանակի որոշակի պահին ճանաչման հետ:

7. Հիմնական միջոցներ

	<i>Համակարգչային տեխնիկա և սարքավորումներ</i>	<i>Տնտեսական և այլ գույք</i>	<i>Վարձակալված գույքի բարելավում</i>	<i>Ընդամենը</i>
Սկզբնական արժեք				
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	1,878	1,779	635	4,292
Ավելացում	90	752	-	842
Նվազեցում	-	(5)	-	(5)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,968	2,526	635	5,129
Ավելացում	1,801	33	-	1,834
Նվազեցում	-	-	-	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,769	2,559	635	6,963
Մաշվածություն				
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	(1,781)	(1,427)	(63)	(3,271)
Հաշվետու տարվա մաշվածություն	(17)	(567)	(67)	(651)
Նվազեցումներ	-	-	-	-
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(1,798)	(1,994)	(130)	(3,922)
Հաշվետու տարվա մաշվածություն	(1,268)	(327)	(67)	(1,662)
Նվազեցումներ	-	-	-	-
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(3,066)	(2,321)	(197)	(5,584)
Չուտ հաշվեկշռային արժեք				
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	170	532	505	1,207
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	703	238	438	1,379

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի գրավադրված հիմնական միջոցներ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նույնպես :

8. Պաշարներ

	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Անավարտ աշխատանք	9,251	-
Վառելիք	101	212
Այլ նյութեր	363	127
	9,715	339

9. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Առևտրային դեբիտորական պարտքեր	9,890	7,417
Տրված կանխավճարներ	-	60
Հարկերի գծով	510	8
Չետաձգված հարկեր ԱԱՀ-ի գծով	19	19
	10,419	7,504

10. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	Արժույթ	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
Ընթացիկ հաշիվներ բանկերում	ՀՀ դրամ	503	1
Կանխիկ դրամական միջոցներ	ՀՀ դրամ	3,174	627
		3,677	628

11. Փոխառություն

Փոխառությունները ստացված են ՀՀ դրամով, անտոկոս և ապահովված չեն: Փոխառությունները ենթակա են մարման փոխատուի կողմից պահանջ ներկայացնելուց մեկ տարվա ընթացքում և արտացոլված են անվանական գումարով:

12. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	<u>31 դեկտեմբերի 2022թ.</u>	<u>31 դեկտեմբերի 2021թ.</u>
Առևտրային կրեդիտորական պարտքեր	10,217	1,361
Ստացված կանխավճարներ ծառայությունների մատուցման համար	6,650	-
Չօգտագործված արձակուրդի գծով պահուստ	846	1,145
Վճարվելիք հարկեր և պարտավորություններ	357	650
Այլ կրեդիտորական պարտքեր	500	500
	<u>18,570</u>	<u>3,656</u>

13. Հասույթ

	<u>2022թ.</u>	<u>2021թ.</u>
Առևտրական ծառայություններից հասույթ	500	-
Հաշվապահական և խորհրդատվական ծառայություններից հասույթ	11,398	9,562
	<u>11,898</u>	<u>9,562</u>

14. Վաճառքի հնքնարժեք

	<u>2022թ.</u>	<u>2021թ.</u>
Աշխատակիցների հատուցումներ	2,575	2,011
Վառելիք և այլ նյութեր	3,231	2,754
Վարձակալություն	2,436	254
Մաշվածություն և ամորտիզացիա	859	967
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	116	329
Այլ	63	4
	<u>9,281</u>	<u>6,319</u>

15. Վարչական ծախսեր

	<u>2022թ.</u>	<u>2021թ.</u>
Աշխատակիցների հատուցումներ	2,053	2,004
Իրավաբանական և այլ մասնագիտական ծառայություններ	1,200	700
Գրասենյակային ծախսեր	1,084	31
Վարձակալություն	722	-
Մաշվածություն և ամորտիզացիա	219	115
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	120	-
Բանկային ծախսեր	5	11
Այլ վարչական ծախսեր	191	1,031
	<u>5,594</u>	<u>3,892</u>

16. Պարտավորվածություններ, պայմանական պարտավորություններ**Ընկերության գործառնական միջավայրը**

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերի զարգացումը՝ շուկայական տնտեսության պահանջներին համապատասխան:

Հայաստանի տնտեսության ապագա կայունությունը առավելապես կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից իրականացվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունից:

Ներկայումս Ընկերության ղեկավարությունը հետևում է միկրո և մակրոտնտեսական պայմանների փոփոխության հնարավոր ազդեցությունը Ընկերության ֆինանսական վիճակի և գործունեության վրա:

17. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ընկերության հիմնադրի մասին տեղեկատվությունը բացահայտված է Ծանոթագրություն 1-ում: Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունը տիրապետում է կապակցված կողմերի հետ գործարքների որոշման և պատշաճ կերպով բացահայտման համապատասխան գործընթացների:

Ընկերությունը կապակցված կողմերի հետ կատարում է այնպիսի գործարքներ, որոնք համարժեք են անկախ կողմերի հետ գործարքներին:

Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

Ստորև ներկայացված են առանցքային ղեկավար հետ գործարքների ընդհանուր գումարները և մնացորդները.

	Գործարքի գումարը ղեկտեմբեր 31-ի ավատված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի	
	2022թ.	2021թ.	2022թ.	2021թ.
Աշխատավարձ և պարգևավճարներ Ստացված փոխառություններ Մարված փոխառություններ	645	1,464	-	-
	7,100	2,465	8,830	7,330
	(5,600)	-	-	-

**Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ կապակցված
ընկերությունների հետ**

	Գործարքի գումարը ղեկտեմբեր 31-ի ավատված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբերի	
	2022թ.	2021թ.	2022թ.	2021թ.
Ստացված փոխառություններ	1,800	250	1,800	-
Մարված փոխառություններ	-	(250)	-	-

18. Ռիսկի կառավարում

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները կազմված են դրամական միջոցներից և դրանց համարժեքներից, առևտրային և այլ դեբիտորական և կրեդիտորական պարտքերից և ստացված փոխառություններից:

Հիմնական ռիսկերը, կապված ընկերության ֆինանսական գործիքների հետ, հանդիսանում են տոկոսադրույքի ռիսկը, վարկային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Ընկերության ղեկավար անձնակազմը իրականացնում է վերահսկողություն այդ ռիսկերից յուրաքանչյուրի գծով, որն ամփոփված է ստորև:

Տոկոսադրույքի ռիսկ

Ընկերության ստացված փոխառությունները, եկամուտները և գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքերը անկախ են շուկայական տոկոսադրույքի փոփոխություններից:

Վարկային ռիսկ

Ընկերությունը համագործակցում է միայն ճանաչված և վճարունակ երրորդ կողմերի հետ:

Ընկերության՝ վարկային ռիսկին ենթարկվածության վրա ազդում է գործընկերոջ հնարավոր անվճարունակությունը, որի առավելագույն գումարը հավասար է համապատասխան ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքին:

Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը իրականացնում է շարունակական վերահսկողություն վնասներ կրելու ռիսկի ուղղությամբ, որն առաջանում է իրացվելի ակտիվների բացակայության պատճառով ֆինանսական պարտավորություններն ամբողջությամբ կատարելու անկարողությունից: Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով: